ԿԱՐԾԻՔ

Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման գործընթացում» թեմայով ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հանրակրթական դպրոցում աշխարհագրական կրթությունն ունի աշխարհայացքային, համամշակութային, կրթաճանաչողական նշանակություն ունի և ընդհանրացնում է աշխարհի մասին գիտելիքները, օրինաչափություններն ու փոխադարձ կապերը, տալիս է աշխարհի գիտական աշխարհագրական պատկերը: Այն նպաստում է սովորողների հայրենասիրական և բնապահանական դաստիարակությանը՝ մղելով շրջակա միջավայրի ճանաչմանը և յուրացմանը: Դպրոցական աշխարհագրության զարգացումը սերտորեն կապված է աշխարհագրություն գիտության զարգացման հետ, որը միտված է կիրառական արդյունքների ստեղծմանը, աշխարհագրական համալիր հետազոտությունների իրականացմանը: Այս առումով սովորողների հետազոտական կարողությունների ձևավորումը կարևոր հրամայական է: Այն ամրագրված է նաև կրթական չափորոշիչներում և ուսումնական ծրագրերում՝ ընդգրկվելով միջնակարգ կրթության կարողունակություններում:

Մանկավարժության արդիական մոտեցումներից է ուսուցման տեխնոլոգիաների գործարկումը՝ նպատակ ունենալով հստակ երաշխավորված կրթական վերջնարդյունքների ապահովմանը:

Սույն ատենախոսության մեջ վերլուծված է հանրակրթության առանցքային և արդիական հիմնախնդիրներից մեկը: Այն ուղղված է աշխարհագրության ուսուցման

գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաների որոշակիացմանը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է մի կողմից լայնախոհ, բանիմաց և հայրենասեր մարդու ձևավորմամբ, դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությամբ, և մյուս կողմից՝ նշված հիմնախնդրի լուծմանը միտված տեսության ու պրակտիկայի անկատարությամբ:

Ըստ աշխարհագրություն առարկայի գործող չափորոշիչների, առանցքային է դպրոցականների աշխարհագրական հետազոտական գործունեությունը, սակայն ուսուցման տեխնոլոգիաների դերին դեռ պատշաճ տեղ չի տրվել առարկայի ուսուցման մեթոդաբանության մեջ:

Ժամանակակից մանկավարժության հարացույցերի, կրթության շարունակականության և ակտիվ ուսուցման համատեքստում ատենախոսի կողմից հիմնավորվել և ներկայացվել է աշխատանքի և՛ գործնական, և՛ մանկավարժական նշանակությունը: Արդի մեդիահոսքերի, հարափոփոխ իրականության, աշխարհագրության և նրա ուսուցման մեթոդիկայի զարգացման միտումները ենթադրում են դպրոցականներին զինել խոր և հավաստի գիտելիքներով, գիտահեն որոշումներ կատարելու հմտություններով, որոնց հիմքում ընկած են հետազոտական կարողությունները:

Ահա այս ամբողջականացմանն է ուղղված Անի Մկրտումյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որի նպատակը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող մեթոդական համակարգի մշակումն է աշխարհագրություն առարկայի օրինակով, առաջադրելով աշխարհագրության ուսուցման գործընթացում հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաներ, մշակելով համապատասխան մեթոդական համակարգ, փորձարկելով այն դպրոցներում գնահատելով դրանց արդյունավետությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, հավելվածից, 132 անուն օգտագործված գրականությունից: Աշխատանքի ծավալը 156 համակարգչային էջ է, պարունակում է 21 նկար և 14 աղյուսակ:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը, նրանից բխող խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական վարկածը, հետազոտության մեթոդաբանությունը, գիտական նորույթը, ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով, կատարվել է հիմնարար հետազոտական աշխատանք: Ընթացիկ արդյունքները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, տպագրվել են գիտական հոդվածների տեսքով: Իրականացվել է փորձարարական ուսուցում հանրապետության չորս դպրոցներում, իսկ միջազգային փորձին ծանոթանալու նպատակով հեղինակն ուսանել է Վիեննայի բնական ռեսուրսների և կենսաբանական գիտությունների համալսարանում:

Առաջին գլխում վերլուծված է հետազոտահեն ուսուցման տեսական մեթոդաբանական հիմքերը, աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացը և տրված են դրանց պայմանները: Հենվելով հայրենական և արտասահմանյան մի շարք մտածողների հայեցակարգային մոտեցումների վրա՝ ներկայացված են ուսուցչի մասնագիտական կոմպետենտության դերը սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ստեղծագործական, հետազոտական կարողությունների զարգացման, ինչպես նաև ինքնուրույն հետազոտական գործունեության կազմակերպման գործում:

Ատենախոսի կողմից կատարվել է համեմատական վերլուծություններ, շեշտադրվել են արտերկրյա և հայ մտածողների աշխատանքները: Ատենախոսն

անդրադարձել է հայ մանկավարժական մտքի պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին, նշել անվանի գիտնականների և մանկավարժների՝ սովորողների ինքնուրույն ուսումնառության և հետազոտական մեթոդների կիրառման հիմնավորումները:

Հետազոտական աշխատանքներում միջառարկայական կապերի ապահովման վերաբերյալ հիմնավոր աշխատանք է կատարվել: Ուշագրավ է այն, որ նշված չափանիշները, որոնք ընդունված են Միջազգային Բակալավրիատում, հեղինակը տեղայնացրել և հարմարացրել է ՀՀ կրթական ընդունված վերջնարդյունքներին, ներկայացրել նաև իր մշակումները:

Հետազոտահեն ուսուցման արդյունավետության գրավականներից շեշտադրվել է կրթական նպատակների հստակեցումը Բ. Բլումի աստիճանակարգի միջոցով: Վերջինիս հիման վրա մշակվել են հեղինակային աշխարհագրական խնդիրներ՝ տեղակայվելով «im.dproc.am» կայքում: Ներկայացվել են նաև դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գնահատման սանդղակներ, առաջադրանքներ, Ավստրիայում կազմակերպված «Շողացող գիտություն» ծրագրի բազմառարկայական հետազոտությունների օրինակներ:

Ատենախոսության ***երկրորդ գլխում*** հեղինակի կողմից վերլուծված են աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման մի շարք ժամանակակից տեխնոլոգիաներ, նախանշված են դրանց կիրառման սկզբունքները: Դիտարկված է առարկայական չափորոշիչներում ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների գործնական նշանակությունը, որոնք հնարավորություն են տալիս դպրոցականներին զինել XXI դարին համարժեք գիտելիքներով, կարողություններով և հմտություններով:

Ատենախոսը հիմնավորում է, որ ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է հստակորեն սահմանել

կրթական նպատակները, կիրառել ուսումնական գործընթացի վերահսկողության տարբեր ձևեր, ուսումնաօժանդակ ուղեցույցներ: Աշխատանքում առկա է նրա կողմից մշակած հետազոտական նախագծերը, առարկայական դասերի նմուշները, հետազոտական առաջադրանքները բնութագրվում են ստեղծագործական ընթացակարգով և տրամաբանական հանգուցալուծմամբ:

Հատկանշական է, որ հեղինակը փորձ է կատարել մշակել աշխարհագրության ուսուցման կազմակերպման նոր մոտեցումներ՝ կիրառելով նաև հոգեբանության ձեռքբերումները, կարևորելով ոչ միայն ուսուցման տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների ուսումնասիրություն, այլև սովորողակենտրոն ուսուցման համատեքստում կարևորել է սովորողների ուսումնական շարժառիթների խթանումը, ուսումնասիրվող հետազոտության հարցերի արժևորումը, ինքնուրույն ուսումնառությունը: Այս հիմնահարցերն արդիական են աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում և ունեն առավել խոր հետազոտության կարիք:

Հետազոտության վերջին՝ ***երրորդ գլուխը*** նվիրված է ատենախոսի տեսական և գործնական հետազոտության վերլուծական ամփոփմանը, աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման արդյունավետության փորձարարական հիմնավորմանը: Ատենախոսին հաջողվել է պատշաճ ներկայացնել փորձարարական դասերի նպատակները, չափանիշները:

Աշխատանքում երեք փուլով (նախապատրաստման, ուսուցանող, ստուգողական) իրականացվող փորձարարական ուսուցման ընթացքն ու արդյունքները ներկայացված են հիմնավոր: Հեղինակի կողմից մշակված մեթոդական հանձնարարականները, առաջադրանքները, տեխնոլոգիական քարտերը, գնահատման սանդղակները, ուղեցույցների, ձևանմուշների հետ միասին կիրառվել են հետազոտության բազա հանդիսացած դպրոցներում: Դրանց

փորձարարական դասերի արդյունքները ենթարկվել են համալիր (SWOT) վերլուծության:

Աշխատանքում նկատվում է հեղինակի ինքնուրույնությունը, սեփական դիրքորոշումն ու տեղեկացվածության բարձր մակարդակը, հետազոտության իրականացման փորձառությունը:

Հետազոտության արդյունքներն ամփոփվել են հիմնավոր եզրակացություններում, որոնք բովանդակային առումով համապատասխանում են հետազոտության նպատակին և խնդիրներին: Ներկայացվել են գործնական և ոլորտի բարեփոխմանը միտված առաջարկություններ: Աշխատանքում օգտագործված է մասնագիտական ժամանակակից գրականություն:

Հետազոտության արդյունքները հավաստի են, տրամագրերը և աղյուսակները ամփոփում են կատարված աշխատանքը և փաստում դրանց դրական շարժընթացը:

Առաջարկում ենք հեղինակի կողմից ըստ դասարանների մշակված հետազոտական նախագծերը ամփոփել որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ հիմնական դպրոցում աշխարհագրության հետազոտահեն ուսուցման գործընթացը համակարգելու նպատակով:

Ներկայացված դրական բնորոշումներից զատ ատենախոսության վերաբերյալ ունենք որոշ դիտարկումներ:

1. Ատենախոսի կողմից 9-րդ դասարանում կիրառման համար մշակած «Իմ արմատները» հետազոտական աշխատանքի ուղեցույցը մասնակի լրամշակման կարիք ունի՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրման համար:

2. Մեր կարծիքով Բ.Բլումի տաքսոնոմիային համահունչ աշխարհագրական առաջադրանքներում անհրաժեշտ է ընգգծել նաև միջառարկայական կապերի դերը:

3. Թեպետ Ա.Մկրտումյանն անդրադարձել է աշխարհագրության առարկայական նոր չափորոշիչներին, կարծում ենք՝ կարելի էր իրականացնել առավել մանրամասն վերլուծություն նոր չափորոշիչների ներդրման հնարավորությունների ուղղությամբ:

4. Բուհ - դպրոց համագործակցության բարձրացման նպատակով կարելի էր իրականացնել առավել ընդգրկուն աշխատանքներ, տեղայնացնելով բազմառարկայական հետազոտահեն ուսուցման վերաբերյալ ավստրիական փորձը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման գործընթացում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն և ավարտուն հետազոտություն է, թեման արդիական է, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում, հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ. 00.02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտական թվանիշին, իսկ հայցորդը միանգամայն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝ Մ. ԻՍՊԻՐՅԱՆ

19.05.2022 թ.